

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7/2

24 փետրվարի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ ժորա Ղազանյանի 26.01.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 26.11.2014 թ-ի թիվ 319 որոշման դեմ:

Ա/Ձ ժորա Ղազանյանի գանգատում բերված փաստարկները.

Ա/Ձ ժորա Ղազանյանը հայտնում է, որ զբաղվել է տաքսի ծառայության մատուցմամբ և ժամանակին վճարել է գործունեությունից բխող հարկային պարտավորությունները:

01.12.2014 թ-ին ստացվել է ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 26.11.2014 թ-ի թիվ 319 որոշումը, որի համաձայն չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 380.800 դրամ: Ըստ գանգատի, Ա/Ձ ժորա Ղազանյանը նման պարտավորություն չունի:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ ժորա Ղազանյանը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 26.11.2014 թ-ի թիվ 319 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ ժորա Ղազանյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 01.10.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ ժորա Ղազանյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 380.800 դրամ, որից 8500 դրամն առաջացել է եկամտահարկի 2007 թ-ի տարեկան հաշվարկով, 900 դրամը հաստատագրված վճարի 2007 թ-ի հոկտեմբեր ամսվա հայտարարությունով, իսկ 371.400 դրամը «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն 2009 թ-ի հունվարից մինչև 2012 թ-ի դեկտեմբեր ամիսների համար հաշվարկված գումարները սահմանված կարգով չվճարելու համար: Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի կողմից 26.11.2014 թ-ին ընդունվել է թիվ 319 որոշումը Ա/Ձ ժորա Ղազանյանից 380.800 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Տվյալ դեպքում եկամտահարկի և հաստատագրված վճարի գծով պարտավորություններն առաջացել են Ա/Ձ ժորա Ղազանյանի կողմից հարկային տեսչություն ներկայացված համապատասխան հաշվետվություններով, հետևապես այս մասով գանգատում բերված փաստարկները չեն կարող հիմնավոր համարվել:

